




Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի

Ա Ի Ե Տ Ա Բ Ե Բ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

ԱԶԳԱՅԻՆՔ, ԲԱՐՈՅԱԿԱՆՔ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԱՆՁՆՈՒՐԱՅՈՒԹԻՒՆՆ ԻՆՁ Է



առաքինութիւններ
կան որ յոտակ եւ
որոշ անուն մը չու-
նին շատ լեզուներու մէջ.
Վասն զի անոնց սահմանը կամ
ինչ լինելը պարզ կերպով չէ
հասկըցուած: Առանցմէ մէկն է նաեւ
անձնութիւններ, որ մեր նախ-
նեաց գրքերուն մէջ դորձածական բառ չէ,
թէպէտ եւ կազմուած է սուրբ Աւետարանին
ուրանայ զանազան խօսքերէն. «Եթէ որ կամի զինի
իմ գալ — կրսէ Տէրն մեր — ուրացի զանձն

իւր»: — Ի՜նչ է արդեօք այս անձնութեան
թիւնը:

Չգարմանայ կարգացողը՝ թէ որ առաջ այս
ըսեմք թէ անձնութեան թիւնը այնպիսի
Քրիստոնէական առաքինութիւն մի է՝ որ
միւս ամէն առաքինութիւններէն աւելի վը-
տեմ, աւելի պատուական եւ աւելի սակաւա-
գիւտ է. վասն զի ասոր մի միայն կատարեալ
օրինակը եւ ուսուցիչը Քրիստոս է, նախա-
տիպն ամենայն գերմարդկային կատարելու-
թեանց: Քրիստոնէական անձնութեան
է հրաժարելն ամենայն անձնական հանգըս-

տութենէ, պատիւներէ, կիրքերէ, հարըստութենէ եւ ամէն տեսակ մարմնաւոր օգուաներէ՝ վասն սիրոյն Աստուծոյ եւ վասն փրկութեան հոգւոյ: Եւ չքէ մէկը թէ այդպիսի առաքինութիւնը այժմ մօտ է, քանի որ սուրբ Աւետարանը կընդունիմք մեզի աստուածային պատգամ եւ յաւիտեանական օրէնք, չեմք կրնար այս առաքինութիւնը արհամարհել՝ առանց Աւետարանն ուրանալու: Եթէ գտնուին եւս ուրացողներ, անով ոչ Աւետարանը կը ազդի իրեն անփոփոխելի ճշմարտութիւն լինելէն, եւ ոչ անձնուրացութիւնը քրիստոնէական վսեմ՝ առաքինութիւն լինելէն: — Թող որ զուր տեղը կարծիք կրնեն ոմանք թէ այս առաքինութիւնը այժմ չգտնուելիք բան մի է, մինչդեռ ամենայն քրիստոնէայ ազգաց մէջ եւս ոչ սակաւ միանձունք եւ միանձնուհիք եւ ուրիշ առաքինի անձինք ասոր կենդանի օրինակք եւ գործադիրք են ամէն տեղ, մանաւանդ եւրոպայի մէջ:

Այսու ամենայնիւ մեր միտքը այս տեղս ոչ այնչափ քրիստոնէական անձնուրացութիւնը յիշատակել է, որչափ անոր մէկ ճիւղը, կամ թէ աւելի ճիշդ ըսեմք՝ անոր մէկ մասը, որ է անձնուրացութիւն հայրենասիրական եւ մարդասիրական. եւ ուրիշ խօսքով՝ հայրենեաց սիրոյն համար, կամ թէ մարդկային ազգի ազէկութիւն ընելու համար՝ ինքզինքը եւ իրեն ամէն հանգստութիւնն ու շահը մոռնալը, մէկգի դնելը:

Պէտք է խոստովանիմք որ եթէ քրիստոնէական անձնուրացութիւնը սակաւագիւտ բան է այժմ, այս մեր անձնասէր եւ շահասէր դարուս մէջ հայրենասիրականն ու մարդասիրականն ալ հազիւ երբեք կտեսնուի. եւ սակայն մեծ մոլորութիւն է կարծելը թէ ամենեւին չեն գտնուիր անձնուրաց հայրենասէրք եւ մարդասէրք. եւ այս ըսելու համար՝ անձնապաշտ մարդը անտարակոյս իր մէկչափէ նաեւ զուրիշները եւ կխարբուի:

Քանի որ անմոռանալի են պատմութեանց մէջ, օրինակի համար՝ նաեւ մեր ազգային պատմութեան մէջ, անձնուրաց սրբոց եւ հայրենասէր քաջազանց անուններն ու գործերը, ինչպէս պիտի չգտնուին նաեւ այժմ եւ այսուհետեւ նոցա հետեւողներ: Գիտեմք նաեւ մեք թէ այժմ յոյժ սակաւ են այնպիսիները. բայց միթէ հին ատենն եւս խիստ բազմաթիւ էին անձնուրաց նահատակները. եթէ այնպէս լինէր, այս առաքինութիւնը այն ժամանակներն եւս այսքան սակաւագիւտ եւ յարգի բան չէր լիներ:

Եթէ մեր ազգը կարօտ է այժմ անձնուրաց հայրենասէրներու, աւելի եւս կարօտ է այնպիսի անձանց յարգը ճանչցողներու: Բազմամեայ գերութեան եւ ազգային հին եւ նոր պարծանքներէ յուսահատութեան մէկ գառն պտուղն եւս այս է, որ հաստարակաց բարւոյն համար կեանքը դնել եւ ամէն անձնական հանգստութիւն զոհել ինչ եղածն անգամ շատին անծանօթ բան է: Ուստի եթէ տեսնեն մէկն որ իւր պատիւը՝ հանգըստութիւնը՝ շահը մէկգի գրած, ազգին օգտին կաշխատի, փոխանակ վրան հիանալու, եւ ձեռքերնէն եկածին չափ անոր գործակից լինելու, կը արմանան նորա անհոգեւոր՝ թէ որ իրենք բարեմիտ են, եւ կամ ծուռ կմեկնեն կամաւ նորա բարի գիտաւորութիւնը՝ թէ որ իրենք չարամիտ ու չարասիրտ մարդիկ են:

Բայց ճշմարտապէս անձնուրաց մարդուն պարտքն ինչ է. — ամենեւին ուշ չդնել շահակրատ մարդկանց խօսքերուն ու կարծիքներուն, եւ իւր ուղիղ եւ օգտակար ճանչցած ճանապարհէն ամենեւին չխոտորիլ:

Անձնուրացութիւնը սրչափ որ վսեմ ու բարձր առաքինութիւն է, նոյնչափ ալ անձնուրաց առաքինին բարձր պիտի կենայ բարոյական աշխարհի օգուն մէջ, եւ չարախօսութեան ու վատութեան նեաերուն անմերձեանալի: